

Հարգելի հայրենակից,

Եվս մեկ անգամ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ Հայաստան-Սփյուռք  
խորհրդաժողովին մասնակցելու և Ձեր կազմակերպությունը/համայնքը  
ներկայացնելու համար:

Թե՛ Սփյուռքից և թե՛ Հայաստանից խորհրդաժողովին մասնակցել ցանկացողների մեծ  
թիվը վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է շարունակական երկխոսություն ծավալել  
նրանց միջև, ովքեր Հայաստանի համար ավելի վառ ապագա և Հայաստան-Սփյուռք  
ավելի արդյունավետ հարաբերություններ ապահովելու համար ցանկանում են  
միասին աշխատել:

Այս նպատակով.

1. Մենք բոլոր ելույթները տեղադրել ենք մեր կայքէջում  
([www.armeniadiaspora.com/conference2006](http://www.armeniadiaspora.com/conference2006)) այն լեզուներով, որոնցով դրանք  
ներկայացվել են: Կայքէջում տեղադրել ենք նաև այն ողջ մամակագրությունը, որի  
մասին չի խոսվել խորհրդաժողովի ընթացքում, բայց որոնց հեղինակները  
ցանկություն ունեն իրենց մտքերը կիսելու: Շնորհակալությամբ կընդունենք Ձեր  
կողմից ցանկացած լրացումներ, առաջարկություններ և ուղղումներ: Մենք նաև բարձր  
կգնահատեինք, եթե Ձեր համայնքի կայքէջում հղում արվեր մեր կայքէջին (և, իհարկե,  
մենք կարող ենք հղումներ անել Ձեր համայնքի կայքէջին):
2. Համաձայն նախախորհրդաժողովյան հանդիպումների ընթացքում ձեռք բերված  
պայմանավորվածության, ընդհանուր մտահոգության առարկա հանդիսացող հարցերի  
շուրջ խորհրդակցելու համար մենք Ձեզ հետ անմիջականորեն կկապվենք  
էլեկտրոնային փոստի միջոցով:

Խնդրում եմ այս նամակը դիտարկել որպես նման էլեկտրոնային նամակներից  
առաջինը և թույլ տալ մի առաջարկություն անել, որը սեղմ կերպով արժարժվել էր  
Ձեր՝ սեպտեմբեր ամսին այստեղ լինելու ընթացքում. այն է՝ 2007թ. հուլիսի Երևանում  
կազմակերպել երիտասարդական խորհրդաժողով: Խորհրդաժողովի նպատակը կլինի  
ուսանողներին և երեսունից ցածր երիտասարդներին ներգրավել այն նույն թեմաների  
քննարկման մեջ, որոնք արժարժվեցին «Նոր պատասխաններ հին

հարցադրումներին» խորագրով ֆորումի ընթացքում: Բացի այդ, երիտասարդներից ոմանք, ում հետ մենք կապ ենք պահպանում, իրենց կողմից ներկայացրել են որոշ հարցադրումներ և առաջարկել թեմաներ: Համոզված են, որ եթե Դուք այս հարցը բարձրացնեք Ձեր համայնքի երիտասարդների ու երիտասարդական կազմակերպությունների առջև, ապա մենք նրանցից ևս կստանանք լրացուցիչ առաջարկներ: Դա երիտասարդ սերնդին թույլ կտա սահմանել Հայաստանում և Սփյուռքում տեղի ունեցող գործընթացներում իրենց ներգրավվելու հնարավոր ուղիները: Մենք շնորհակալ կլինենք, եթե այս նախաձեռնության վերաբերյալ Ձեր առաջարկները ներկայացվեն մինչև ս.թ. նոյեմբերի 20-ը: Եթե պատասխանը դրական լինի, մենք կարող ենք ամսաթիվ ընտրել, շրջանառության մեջ դնել օրակարգի առաջարկությունները և առաջ շարժվել:

Ձեր առաջարկները մեզ ներկայացրեք Ձեզ համար նախընտրելի լեզվով, և մենք Ձեր պատասխանները կտեղադրենք [www.armeniadiaspora.com/conference2006/consultations](http://www.armeniadiaspora.com/conference2006/consultations) փակ կայքէջում, որը հասանելի կլինի միայն Ձեզ` այս նամակի հասցեատերերին:

Հարգանքով`

Վարդան Օսկանյան